

11062



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Երջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան



« 10 » 10 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 211 - 24

Նախաձեռնող՝

«Լուր» ՍՊԸ

ք. Երևան, Նոր-Նորք, Միկոյան փողոց, բն. 42

Գործունեությունը՝

Արաքս համայնքի Ջրառատ բնակավայրում

Թ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցի կառուցում

Արմավիրի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 211 - 24

« 10 » հոկտեմբերի 2024թ.

Արաքս համայնքի Ջրառատ բնակավայրում նախատեսվող Թ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Լուր» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ բնակավայր

Ներածական մաս. Համաձայն «ԼՈՒՔ» ՍՊԸ կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ նախատեսվում է Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ բնակավայրի Թ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցի կառուցում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվում քաղաքաշինության բնագավառում որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Արաքսի համայնքապետարանի կողմից տրամադրված 2024թ. մարտի 5-ի N 23 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով գրանցված (կադաստրային ծածկագիր՝ 04-085-0049-0001) պետական սեփականություն հանդիսացող և «Ջրառատի Թաթուլ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրված 1,8882 հա հողամասի սահմաններում, որի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ բնակավայրի վարչական տարածքում (Ա.Իսահակյան 2), դպրոցի շենքի արևմտյան հատվածում: Ամենամյա շինությունը



տեղակայված է նախատեսվող գործունեության տարաքծի եզրագծից ավելի քան 11 մ հեռավորության վրա:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Արարատյան լճա-կուտակումային հարթավայրի սահմաններում: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հյուսիս-արևելք: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 835.0-836.0 մետրի սահմաններում:

Ինժեներա-երկրաբանական կառուցվածքում հետազոտման խորության սահմաններում (12.0 մ) վերևից ներքև բացահայտվել են միայն չորրորդական հասակի նստվածքային առաջացումները և տեխնոգեն գրունտները, հողաբուսական շերտը բացակայում է:

Հորատման աշխատանքների ընթացքում գրունտային ջրերը բացահայտվել են բոլոր հորատանցքերում, հորատման նիշից 2.1-2.2 մետր խորությունների վրա: Գրունտային ջրերի առկայությամբ պայմանավորված դպրոցի սեյսմակայունությունը ապահովելու համար իրականացվելու են միջոցառումներ, տեղադրվելու է նաև դրենաժային համակարգ և այլն:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը և այլն, բացակայում են: Տեղամասը գտնվում է տաք կլիմայական և սեյսմիկ 1-ին գոտում:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Դպրոցի կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- ընդհանուր հողատարածքի մակերես - 18882 քմ (100 %),
- կառուցապատման մակերես - 3548 քմ (19.6 %),
- անջրանցիկ մակերես - 1500 քմ (6.9 %)
- բացօդյա մարզադաշտի մակերես - 1460 քմ (8 %),
- բացօդյա մարզահրապարակի մակերես - 478 քմ (2.6 %),
- կանաչապատման գոտու մակերես - 11895 քմ (62.9%):

Համաձայն նախագծային լուծումների՝ նոր դպրոցը նախատեսված է երկհարկ՝ 432 աշակերտի համար: Ունենալու է նկուղային մեկ հարկ՝ 3.3 մ բարձրությամբ և 620 քմ մակերեսով, որը ծառայելու է նաև որպես ժամանակավոր թաքստոց: Շենքի ծավալում նախատեսվում է ունենալ 2 փակ ներքին բակ ապակե ծածկի տակ՝ լրացուցիչ ռեկրեացիոն գոտիների լուսավորությունն ապահովելու համար:

Դպրոցն ունենալու է ուղղանկյուն եզրագիծ և կարանով բաժանված է երկու հավասար մասնաշենքերի: Նոր դպրոցը իրականացվելու է միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաներով, ներառյալ՝ հիմքերը, սյուները, հեծանները և միջհարկային սալերը: Ջրահեռացումներն իրականացվելու են կազմակերպված:

Առաջին հարկում տեղակայվելու են 1-5-րդ դասարանների 2-ական դասասենյակները, նախադպրոցական դասարանը, գրադարանն ու համակարգչային տեխնիկայի և ռազմագիտության կաբինետը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներն՝ իրենց ընդունարանով, աշխատանքի ուսուցման կաբինետը, բժշկի սենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, սպորտդահլիճը՝ կից հանդերձարաններով և մարզիչի սենյակով, ճաշարանը և խոհանոցը, 3 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ:

Երկրորդ հարկում տեղակայվելու են 6-12-րդ դասարանների դասասենյակները, 2 լեզվի կաբինետ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, ռեսուրսային կենտրոնը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, կենսաբանության և քիմիայի մասնագիտացված լսարանը՝ կից լաբորատորիայով, ֆիզիկայի մասնագիտացված լսարանը՝ կից լաբորատորիայով, հանդիսությունների դահլիճն՝ իրեն ապահարկող



սենյակների խմբով, 4 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ, առկա են նաև պատշգամբներ:

Առաջին հարկի բարձրությունը հատակից առաստաղ կազմում է 3.3 մ: Երկրորդ հարկի բարձրությունը փոփոխական է՝ ստորին մասում կազմում է 3.0 մ ծածկի տակ:

Սպորտային դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կազմում է 7.8 մ, իսկ հանդիսությունների դահլիճի բարձրությունը՝ հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ, կազմում է 4.5 մ:

Դպրոցի բակային տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է բաց մարզադաշտ և մարզահրապարակ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ: Գոյություն ունեցող ցանկապատն իրականացված մետաղյա ցանցով, կպոխարինվի ուղղանկյուն մետաղական ձողերով ցանկապատով:

Դպրոցին կից նախատեսվում է կառուցել կաթսայատուն՝ 6մx9մ առանցքային չափերով:

Դպրոցի շենքի տանիքին տեղադրվելու է 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված 232 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսքիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 16 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար:

Դպրոցի տարածքում տեղադրվելու է FBR15 կայան՝ 15 մ³/օր արտադրողականությամբ կենցաղային կեղտաջրերի մաքրման կայան, որը բավարարելու է դպրոցի հզորությանը: Նախատեսվել է դրենաժային հորատանցք ավելցուկային ջրերի հեռացման համար:

Դպրոցն ապահովված է լինելու հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով և այլն:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության տեսանկյունից նախատեսվել են միջոցառումներ՝ շենքի երեսպատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների տեղադրման, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացման ուղղությամբ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ (թեքահարթակներ, սանհանգույցներ և այլն):

Շինարարական աշխատանքները տևելու են 20 ամիս, ապամոնտաժման աշխատանքների տևողությունը գնահատվել է 4 ամիս:

Շինարարական մեքենաներից և մեխանիզմներից օգտագործվելու են աշտարակային կրունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա:

Շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկային մակերեսը կազմում է 18.882 մ², որտեղ պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու է շինտեխնիկան, ժամանակավոր շինությունները և այլն: Շինհրապարակում տեղադրվելու է մեքենաների անիվների վանալու հարթակ:

Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Նախագծի հողային աշխատանքներից առաջացող ընդհանուր հողային հանույթը կազմում է 5500 մ³ է, որից հետլիցքը կազմում է 4080 մ³: Հետլիցքի համար նախատեսված



հողային հանույթը կարճաժամկետ կապի շինարարական հրապարակում և պարբերաբար կիրականացվի ջրցան՝ փոշեգոյացումը կանխելու նպատակով: Մնացած վտանգավոր նյութերով չաղտոտված 1420 մ³ հողային հանույթը կհեռացվի ու կտեղադրվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Կենցաղային աղբը՝ 3 տ ընդհանուր քանակով հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու է տարածքից մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով՝ տարածքում բացառելով կենցաղային աղբի կուտակումը և այրումը:

Վկայականով ամրագրված հողամասի սահմաններում տեղակայված ներկայիս միջնակարգ դպրոցի, ինչպես նաև հարակից շինությունների քանդման աշխատանքները կիրականացվեն ապամոնտաժման եղանակով՝ կիրառելով ձեռքի կտրող գործիքներ ու զոդման տեխնիկա (բացառելով խոշոր քանդող տեխնիկայի կիրառում)՝ խուսափելու համար աղմուկի և փոշու բարձր մակարդակներից:

Ապամոնտաժման գործողություններից գոյացած շինարարական աղբը գնահատվել է շուրջ 6000 տ: «Շինարարության փայտանյութի թափոնները» գնահատվում են երկրորդային օգտագործման համար պիտանի և օգտագործվելու են կապալառուի կողմից: Այլ նյութերը (հիմնականում մետաղի ջարդոններ, փայտանյութ, դռներ, պատուհաններ, խողովակներ) կտեսակավորվեն և նույնպես կօգտագործվեն որպես երկրորդային հումք:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն ժամանակավոր կառույցների տեղադրմամբ՝ ապահովելով շին. հրապարակում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները, աշխույժ կի աշխատասենյակ և այլն:

Ջուրն օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման, շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար: Շինարարության ժամանակ ջրի հիմնական աղբյուր կձառայի համայնքային ջրամատակարարման ցանցը, որը շինարարության ողջ ընթացքում ապահովվելու է անհրաժեշտ ջրապահանջը:

Ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (50 մարդ), ինչը կազմում է 636.24 մ³: 18882 մ² ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 2492.24 մ³: Ջրցանի հաշվարկն իրականացվել է ամբողջ տարածքի չափի համար՝ ներառելով շինարարության և քանդման գործընթացները:

Շինարարական աշխատանքների ավարտից և գոյություն ունեցող դպրոցի շենքի և կից շինությունների ապամոնտաժումից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել՝ ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման համապատասխան: Տարածքի շուրջ 62.9 %-ը կամ 11895 քմ նախատեսվում է կանաչապատել արժեքավոր և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխան բուսատեսակներով:

Դպրոցի տարածքում գոյություն ունեն ընդհանուր 64 դեկորատիվ և մրգատու ծառեր, որոնք պահպանվելու են՝ բացառությամբ 4 ծառերի: Հատված ծառերի փոխարեն իրականացվելու են լայնամաշտաբ կանաչապատման աշխատանքներ, տնկվելու են շուրջ 386 նոր ծառեր (ընտրված ծառերի տեսակային կազմը ներկայացված է Հաշվետվությամբ), սամշիտ (120), ինչպես նաև ստեղծվելու է ծաղկանոց (156 քմ) և սիզամարգեր (8467 քմ): Կանաչապատման համար անհրաժեշտ 1458 մ³ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ջրառատ բնակավայրում ոռոգման համակարգի բացակայությամբ պայմանավորված՝ դպրոցի տարածքում տեղադրվող 2 ջրի ռեզերվուարներում՝ 46 մ³ և 108 մ³ ընդհանուր

ծավալներով, ամբարված ջուրն օգտագործվելու է դպրոցի կանչապատ գոտիների ոռոգման և հրդեհամարման կարիքների համար:

Շինարարության ընթացքում կշահագործվի դպրոցի ետնամասի ճանապարհահատվածը՝ չխոչընդոտելով երթևեկությանը: Ապահովվելու է երեխաների անվտանգությունը:

Տարածքում առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման գծերը և միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին:

Հաշվետվությունում ներկայացվել է նախատեսվող գործունեության աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և մշակվել են միջոցառումներ՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու նպատակով: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ: ՀՏՀ-ի կողմից կանոնավոր իրականացվող մոնիթորինգի արդյունքները գրանցվելու են Ծրագրի շրջանակում մշակված մոնիթորինգի ստուգաթերթիկում:

Բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը գնահատվել է մոտ 1.5 մլն. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Համաձայն Հաշվետվության՝ դպրոցը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է կառուցապատված տարածքում, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները շինարարության փուլում լինելու են կառավարելի և կրելու են կարճատև բնույթ:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Արմավիրի մարզպետարանը, Արաքսի համայնքապետարանը: Հաշվետվությունը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Արաքս համայնքի Ջրառատ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել են երկու հանրային քննարկում, նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել Հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել հավելյալ միջոցառումներ:
2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
3. Թափոնների, այդ թվում քանդման աշխատանքների արդյունքում առաջացող թափոնների, ներառյալ վտանգավոր թափոնների կուտակումը դիտարկման օգնությամբ, եղանակը, ինչպես նաև կազմակերպված սանիտարական արտավայրում տեղադրում



